ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» ապրիլի 2020թ. № 114

ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0188-0132 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՎԱՐՇԱՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ կետով, հաշվի առնելով, որ Ժողովրդական դեպուտատների Սպիտակի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 19.07.1989թ. արձ. 14 կետ 10 որոշմամբ Գր.Լուսավորիչ թաղամասում գտնվող 06-006-0188-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,06 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասը բնակելի տուն կառուցելու նպատակով հատկացվել է Սեյրան Վարշամի Սահակյանին, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա մինչև 1990 թվականին կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 01/111.4/02625-2020 գրությունը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, Սեյրան Վարշամի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Գր.Լուսավորիչ թաղամասում գտնվող, Սեյրան Վարշամի Սահակյանին հատկացված, 06-006-0188-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0,06 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սեյրան Վարշամի Սահակյանի (ծնված 09.08.1951թ.) սեփականության իրավունքը Գր.Լուսավորիչ թաղամասում գտնվող 06-006-0188-0132 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,06 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի, դրա վրա գտնվող 232,84 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 121,79 քառակուսի մետր մակերեսով կիսանկուղի, 31,82 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի, 9,04 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 27,31 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակի, 3,99 քառակուսի մետր մակերեսով կաթսայատան և 10 քառակուսի մետր մակերեսով ջրավազանի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Գր.Լուսավորիչ թաղամաս, թիվ 46» հասցեն:

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը, ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 15-ի «Գր.լուսավորիչ թաղամասում գտնվող բնակելի տան, բնակելի նշանակության շինությունների եվ հողամասի նկատմամբ Սեյրան Վարշամի Սահակյանի իրավունքը վերականգնելու եվ հասցե տրամադրելու մասին» թիվ 9 որոշումը:

6. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 9
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» ապրիլի 2020 թվականի № 112

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՆ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 8-ի եզրակացությունը՝

1. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) ժամանակավոր պաշտոնակատար Արման Սերգոյի Ավետիսյանին 2020 թվականի ապրիլի 10-ին ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել 2017 թվականի դեկտեմբերի 20-ին նրա հետ կնքված թիվ 7 ժամկետային աշխատանքային պայմանագիրը: Վերջին աշխատանքային օր համարել 2020 թվականի ապրիլի 9-ը:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 9
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» ապրիլի 2020 թվականի N 113

ԱՐՄԱՆ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 8-ի եզրակացությունը և Արման Սերգոյի Ավետիսյանի դիմումը՝

1. 2020 թվականի ապրիլի 10-ից Արման Սերգոյի Ավետիսյանին նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-5) համայնքային ծառայության պաշտոնում:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 260 000 (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3.Աշխատանքային գործառույթները՝ համաձայն համայնքային ծառայության պաշտոնի անձնագրի:

4.Աշխատաժամանակի ռեժիմը, ամենամյա արձակուրդի տեսակը և տևողությունը՝ համաձայն աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի:

5. Արման Սերգոյի Ավետիսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 9
ք. Սպիտակ